ՀայՓոստ
Հայաստանի Փոստ

#քոմարդիկամենուր

Ել-հրտ/2835-2024
26.09.2024թ

«ԷՔՍՊՐԵՍ ԳԱԶ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԲԱՐԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
(Հասցե՝ հ.Աշտարակ, Մուղնի 6 թղմս, տ.142)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

«Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Էքսպրես Գազ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2024 թվականի հուլիսի 01-ին կնքած թիվ «ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-24/37-3» ծածկագրով պայմանագրի շրջանակում Կատարողը պարտավորվել է մատակարարել պայմանագրով սահմանված «Հեղուկ գազ (Գյումրի)» ապրանքը՝ ընդհանուր 8.000 լիտր քանակով: Սակայն Կատարողը 2024 թվականի օգոստոսի 19-ին գրությամբ հայտնել է, որ ապրանքի մատակարարում չի իրականացվելու:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից վերոնշյալ ապրանքի մատակարարում չիրականացնելը համարվում է պայմանագրով սահմանված պարտավորության խախտում՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ (ոչ պատշաճ մատակարարված ապրանքի չափաբաժնի մասով) համարելով այն լուծված:

«ՀայՓոստ» ՓԲԸ
ՀՀ, 0002, Երևան, Սարյան 22
+374 10 514 514
info@haypost.am
www.haypost.am

Ընդհանուր պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվում է «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի միակողմանի լուծման մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը լիազոր մարմնին կներկայացվի «Էքսպրես Գազ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԱՐՄԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Կատ.՝ Տարոն Սանոսյան
Գնումների վարչության ղեկավար
Հեռ.՝ (055) 300022